

**Ամսաթիվ**  
2007-03-02

**Գործի No**  
3-306/Ա

**Դատարան**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ

**Հայցվոր**  
ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչություն

**Պատասխանող**  
«Էգգա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Էդուարդ Գասպարյան

**Խնդիր**  
Արդյո՞ք օտարատառ բառային ապրանքանիշը կազմակերպության մոտքի ճակատային մասում տեղադրելը և այն փաստացի որպես ցուցանակ գործածելը հակասում է ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի ,Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 270 որոշման պահանջներին:  
\*Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքային նշանի<sup>3</sup> որպես գովազդ կամ վաճառքի առաջարկ օգտագործելու արգելք օրենքով նախատեսված չէ:

**Դատական ակտ**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն  
3-306(Ա)  
համայնքների առաջին ատյանի  
2007թ.  
դատարանի որոշում  
քաղաքացիական գործ թիվ 7-11  
Նախագահող դատավոր՝ Ս.Արամյան

Քաղաքացիական գործ թիվ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ                    Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ                    Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՋՅԱՆԻ

Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 2-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքն Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի «Սկսված վարչական վարույթը կարճելու մասին» 18.10.2006 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության (այսուհետ՝ տեսչություն) կողմից «Էգա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) տնօրեն Էդուարդ Գասպարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ տեսչությունը պահանջել է ընկերության տնօրեն Էդուարդ Գասպարյանին ենթարկել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1893-րդ հոդվածի 1-ին մասով, պարտավորեցնել վերջինիս ցուցանակի, գովազդի լեզվական ձևավորումը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 285-րդ հոդվածի համաձայն՝ առաջարկություններ ներկայացնել իրավախախտում կատարած անձին վարչական իրավախախտման կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները վերացնելու ուղղությամբ և պարտավորեցնել վերջինիս առաջարկությունները ստանալուց մեկամսյա ժամկետում հայտնել ձեռնարկված միջոցառումների մասին: Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի «Սկսված վարչական վարույթը կարճելու մասին» 18.10.2006 թվականի որոշմամբ կարճվել է սկսված վարչական վարույթը: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը չի կիրառել ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի թիվ 270

«Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» որոշման (այսուհետ՝ նաև Որոշում) 2-րդ կետի պահանջները, որոնք պետք է կիրառեր: Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ընկերության տնօրենը օտարատառ բառային ապրանքանիշը տեղադրել է կազմակերպության մուտքի ճակատային մասում և այն փաստացի գործածել է որպես ցուցանակ, այնինչ՝ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման 2-րդ կետի համաձայն՝ ցուցանակի լեզուն հայերենն է: Ցուցանակի հայերեն տեղեկատվությունը կարող է զուգորդվել այլ լեզուներով նշված տեղեկատվությամբ: Ցուցանակի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով շարադրված տարբերակին:

Ըստ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման 3-րդ կետի՝ ցուցանակների վրա

---

պետք է գետեղվեն հետևյալ տեղեկությունները՝ կազմակերպության ճակատային մասում փակցված ցուցանակի վրա նշվում են կազմակերպության (ֆիրմայի) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, իսկ մուտքի դռան ցուցանակի վրա՝ աշխատանքային ռեժիմը:

Մինչդեռ, ընկերության ցուցանակի վրա գետեղվել է «ZEBRA» ապրանքային նշանը՝ խախտելով որոշման վերոհիշյալ պահանջները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 12-րդ և 31-րդ հոդվածների պահանջները:

2) Դատարանը կիրառել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, որը

չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը եկել է այն եզրահանգման, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գովազդի շարադրանքը հայերեն լեզվով լինելու և այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով գույնավորվելու դրույթը չի տարածվում օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշների և մակնիշների վրա: Մինչդեռ, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը կիրառելի չէ սույն վեճի նկատմամբ, քանի որ տվյալ դեպքում ապրանքային նշանը օգտագործվել է ոչ թե ըստ նպատակային նշանակության, այլ՝ որպես գովազդ ու ցուցանակ:

3) Դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի

286-րդ հոդվածի պահանջը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Դատավարության կողմերը զրկվել են որոշումը գանգատարկելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի «Սկսված վարչական վարույթը կարճելու մասին» 18.10.2006 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արտոնագրային վարչության 26.09.2002 թվականի որոշմամբ գրանցվել է «Էգա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «ZEBRA» (ՉԵԲՐԱ) ապրանքային նշանը:

2) ՀՀ լեզվի պետական տեսչության պետի 07.09.2006 թվականի թիվ 045/Ս հանձնարարագրի հիման վրա՝ տեսչության աշխատակիցների կողմից ընկերությունում կատարվել է ձևաթղթերի, ցուցանակի, կնիքի ձևավորմանը ներկայացվող պահանջների կատարման ստուգում:

3) 22.09.2006 թվականին կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, որով արձանագրվել է, որ. «Կազմակերպության մուտքի վերևում տեղադրված վահանակը ձևավորված է ոչ հայերեն, միայն օտարալեզու և օտարատառ...: Քաղաքի տարբեր հատվածներում կազմակերպության պատրաստած և տեղադրված գովազդը ձևավորված է ոչ հայերեն: Գովազդային վահանակների լեզուն հայերենը չէ, օտարալեզու շարադրանքը գերակայում է»:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.  
Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.  
«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը:  
Նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում նաև դրա կիրառումը գովազդներում, հրատարակություններում, ինչպես նաև պաշտոնական ձևաթղթերում, ցուցանակներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի «Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 270 որոշման պահանջները վերաբերում են ցուցանակում տեղադրվող տեղեկատվությանը, որի համար սահմանված կարգավորումները, այդ թվում նաև՝ սահմանափակումները, չեն կարող տարածվել ապրանքային նշանի օգտագործման համար օրենքով սահմանված կարգի վրա: Այդ նշանի օգտագործման առանձնահատկությունները սահմանված են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման 3-րդ կետի համաձայն՝ ցուցանակների վրա պետք է գետեղվեն հետևյալ տեղեկությունները. կազմակերպության ճակատային մասում փակցված ցուցանակի վրա՝ կազմակերպության (ֆիրմայի) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, իսկ մուտքի դռան ցուցանակի վրա՝ աշխատանքային ռեժիմը:

Նշված նորմը սահմանում է միայն այն նվազագույն տեղեկատվությունը, որը պարտադիր պետք է պարունակի ցուցանակը: Հետևաբար, Որոշման 3-րդ կետում սահմանված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես կազմակերպության ապրանքային նշանի տեղադրումը սահմանափակող նորմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող վարչական իրավախախտման կապակցությամբ ներգործության միջոցի ենթարկվել այլ կերպ, քան օրենսդրությամբ սահմանված հիմունքներով ու կարգով:

Կազմակերպությանը պատկանող (գրանցված) ապրանքային նշանը ցուցանակում առկա տեղեկությունների հետ մեկտեղ գետեղելու համար պատասխանատվություն օրենքով սահմանված չէ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էության մեջ կիրառելի են դրանց նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պարտականությունների՝ բացառապես օրենքով սահմանված լինելու պահանջը կիրառելի է նաև իրավաբանական անձանց պարտականությունների նկատմամբ:

Հետևաբար, ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի «Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող

---

պահանջները հաստատելու մասին» թիվ 270 որոշմամբ չէին կարող պարտականություններ սահմանվել ո՛չ իրավաբանական անձի, ո՛չ դրա ղեկավար մարմինների նկատմամբ:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.  
«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն հայերենն է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդատուի հայեցողությամբ գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով: «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 3-րդ մասի դրույթը չի տարածվում օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների, ապրանքանիշերի և մակնիշների վրա: Վճուպեկ դատարանը գտնում է, որ գովազդներում և վաճառքի առաջարկներում ապրանքային նշանի՝ օրենքով չարգելված ցանկացած օգտագործման դեպքում կիրառելի է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, քանի որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի սեփականատերն ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք : Հետևապես, Վճուպեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի՝ որպես գովազդ կամ վաճառքի առաջարկ օգտագործելու արգելք օրենքով նախատեսված չէ:

3) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.  
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, համաձայն որի՝ առաջին ատյանի, վերաքննիչ դատարանների և տնտեսական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած և տնտեսական դատարանի օրինական ուժի մեջ չմտած որոշումները կարող են բողոքարկվել վճուպեկության կարգով միայն սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասում կանոնակարգվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը բողոքարկելու ընդհանուր կարգը, համաձայն որի որոշումը կարող է գանգատարկվել այն անձի կողմից, որի նկատմամբ այն կայացվել է, ինչպես նաև տուժողի կողմից:  
Միաժամանակ, նույն հոդվածը սահմանում է բացառություն վարչական տույժ նշանակելու մասին դատարանի (դատավորի) որոշման համար, որը վերջնական է և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կարգով գանգատարկման ենթակա չէ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերի:  
Սույն գործով վիճարկվում է «Սկսված վարչական վարույթը կարճելու մասին» դատարանի որոշումը, որը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարող է դատական կարգով բողոքարկվել այն անձի կողմից, որի նկատմամբ այն կայացվել է, ինչպես նաև տուժողի կողմից:  
Նշված հիմնավորմամբ Վճուպեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ դատական ակտի նշումը որոշման բողոքարկման ենթակա չլինելու մասին:  
Միաժամանակ Վճուպեկ դատարանը գտնում է, որ թեև սույն գործով ներկայացված վճուպեկ բողոքի երրորդ հիմքը հիմնավոր է, սակայն այն բավարար չէ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության

---

օրենսգրքի 227-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:  
Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքի վերաբերյալ տրված պատճառաբանությունների հիման վրա վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. վճռաբեկ բողոքը մերժել: Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի «Սկսված վարչական վարույթը կարճելու մասին» 18.10.2006 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

### **Դատավոր**

Հովհաննես Մանուկյան